1896

№ 12 ԹԷՀՐԱՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԱՊՐԻԼ 3

ԹԷՀՐԱՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԱՊՐԻԼ 3 № 12

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

# ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Հրատարակւում է ամէն չորեքշաբթի օրը

Տարեկան գինն է Թէհրանում 12 ղռն. վեցամսեան 6 ղ. Պարսկաստանի օտար քաղաքները 15 ղ. վեցամսեան 8 ղ. Ռուսաստան 3 ռուբլի. վեցամսեան 2 ռուբլի. Օտար երկիրներ 8 ֆրանկ. վեցամսեան 5 ֆրանկ: Հասցէ՝ Teheran Rédaction ASTCH-AREVELIAN

«ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆԻ» խմբագրութիւնը բաց է ամէն օր բացի կիրակի եւ տօն օրերէն:
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով. իւրաքանչիւր տողին 1 շահի:

## ԲԱՑՈՒԵԼ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ 1896 Թ.

### Ա. Տ. „ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆ“ Ա. Տ.

Բաժանորդագինն է Թէհրանում տարեկան 12 ղռան վեցամսեայ 6 ղ. Պարսկաստանի օտար քաղաքները 15 ղռան, վեցամսեայ 8 ղռան: Ռուսաստան տարեկան 3 ռուբլի վեցամսեայ 2 ր. Օտար երկիրներ 8 ֆրանկ վեցամսեայ 5 ֆ. Թէհրանում ձեռքով ծախուածները հատը 6 շահի: բաժանորդագինը կանխիկ է:

Բաժանորդագրութեան համար դիմել ուղղակի խմբագրութեան. Téhéran, Redaction Astgh-Arevelian.

## ԱԶԳ

Նամակներ և թղթակցութիւններ ուղղել հետեւեալ հասցէին:

Խմբագրութիւն Աստղ-Արեւելեանի՝ Redaction du journal Astgh-Arevelian

Խնդրում ենք այն ամէն պարոններից, որոնք գործ ունին խմբագրութեան հետ, իրենց նամակները ուղղակի խմբագրութեան հասցէին ուղղեն և ոչ թէ մասնաւոր անձանց:

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

----

Մեր ուղղութիւնը. Հայկական հարց. Մի վերջին պատասխան. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ Խորհրդաւոր ղառններ. Նամակ Թէհրանից. Նամակներ խմբագրութեան. Նամակ Դավրէժից. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Մատիցայի աշխարհում (Revue des Revues dans le pays de Matiza) («Մեր Բօժկ» 1896 № 1)

### ՄԵՐ ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ

—

Շատ անգամ է պատահում, որ թէ դրսից և թէ ներսից դիմում են մեզ և հարցնում, թէ Աստղ-Արեւելեանը ինչ կուսակցութեան է պատկանում, կամ Կովկասի որ թերթերին է հետեւում:

Այս տարօրինակ հարցերը մեզ՝ առնուազն զարմացնում են: Ի՞նչ է նշանակում, միթէ հասարակական մի օրգան կարող է իւր էջերը տրամադրել կուսակցական հաշիւներով, միթէ իրաւունք ունի ստիպուած սեւը սպիտակ ներկայացնելով միամիտներին խաբել. ոչ, ոչ, հասարակական մի օրգան պէտք է լինի անաչառ քննադատող, լճացած կեղտոտութիւնները երեւան հանող և շատ անգամ մի պարզ մեքենայի պաշտօն կատարելով հակառակ գաղափարների շփումից յառաջացած երեւոյթների նկարը պատկերացնող և շատ անգամ էլ հէնց իր ներկայացրած նկարի թերութիւնները բացատրող:

Այդ ուրիշ հարց է, երբ մի որոշ կուսակցութիւն կունենայ և իւր որոշ օրգանը, իւր ձգտումների արտայայտիչը. բայց երբ. այն ժամանակ միայն երբ գաղափարական կուսակցութիւնները գոյութեան իրաւունք ստացած կը լինին:

Անգլիան այսօր բաժանուած է. բազմաթիւ կուսակցութեանց. որոնց մէջ գլխաւոր տեղը բռնում են Ազատամիտները և պահպանողականները. առաջինը ձգտում է ժողովրդի յառաջադիմութեան գործը յառաջ տանել անընական արագութեամբ, իսկ երկրորդը՝ ամեն անգամ նրա ձեռքը բռնելով ասում է «սպասիր դեռ շուտ է» կամաց քայլէ որ չ՚ընկնիս:

Բայց այդ միեւնոյնը չեն ներկայացնում մեր կուսակցութիւնները: Այսօր պաշտօնի գլուխ է մի հոգաբարձու, մի ուսուցիչ, մի երէցփոխ մի հոգեւոր պաշտօնեայ, նրա ներկայութիւնը դուր չէ գալիս այս ինչ Թաթոսին, ահա իւր շուրջը հաւաքեց իւր խնամիներին և ազգականներին և կազմեց մի դիւրաբեկ կուսակցութիւն, որի կեանքը այնքան երկար կը լինի, որքան պաշտօնի գլուխ կը մնայ հակառակորդը. արդեօք ծիծաղելի չէ՞ր լինի, եթէ Թաթոսը մի օրգան էլ ունենար իւր հակառակորդին հարուածելու համար:

Ամփոփելով մեր խօսքերը հրապարակով յայտնում ենք, որ այդ ձգտումներով հորիզոն չը բարձրացաւ Աստղ-Արեւելեանը: Նա՛ իրեն նպատակ ունի խորտակել, փշրել այն անջրպետները, որոնք արգելք են դառնում ճշմարիտ կուլտուրայի ծաւալման, ջնջել լոկ ֆինանսական ուժի առաւելութեամբ ձեռք բերուած գիրքերը, ժողովրդին մատնանիշ անել հաւասարութեան օրէնքները և օգնել նրան իւր սեփհական իրաւունքներին պաշտպան կանգնելու գործում: Ահա այս միակ կուսակցութեան է պատկանում Աստղ-Արեւելեանը. որանից դուրս կուսակցութիւն՝ գոյութիւն չունի նրա համար:

### ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

----

Վիէննայից գրում են թէ Հայաստանի մասին հրատարակուած կապոյտ տետրը բաւական ուշադրութիւն գրաւեց այստեղ, գլխաւորապէս այն պատճառով որ Կոմս Գօլուչովսքու քաղաքականութիւնն է պարզաբանում. երեկոյեան թերթերից մէկը այն գաղափարն է յայտնում, թէ Գօլուչովսքին արգելք դառաւ անգլիական արտաքին գործոց Դիւանի անմիջական գործողութեան, և Լորդ Սոլզբերուն այն համոզմունքին բերեց, որ թէ նա իւր Արեւելեան քաղաքականութեան մէջ պնդէր շատով միայնակ պիտի մնար և թէ կոմս Գօլուչովսքին առաջինը պիտի լինէր նորա այդ քաղաքականութեանը չհետեւող, թէեւ նա սկզբից համամիտ էր Սոլզբերուն և միայն այն ժամանակ վճռեց վերջինի քաղաքականութեան չհետեւել երբ հաստատուեց որ Ռուսը վճռել է Թուրքիայի պաշտպանը լինել, և թէ ռուս անգլիական մի պատերազմի վախ կար, որից պիտի առաջ գար Եւրոպական ընդհանուր պատերազմ. այդ ժամանակ նա թող տուեց Հայաստանի Բարենորոգմանց ծրագրի գործադրութիւնը և անմիջապէս մոռացութեան տուեց հայկական խնդիրը:

*Միսիոնարների արտաքսումը*

Բեռլինում հրատարակւող Localanzeiger թերթը տեղեկացնում է թէ ռուսաց խնդրանօք՝ Բ. Դուռը շուտով պիտի արտաքսէ Փոքր Ասիայից բոլոր ամերիկացի և անգլիացի միսիօնարները. թէեւ այս լուրը արժանաւոր աղբիւրից է բայց և այնպէս չպիտի երաշխաւորեմ «ասում է վերոյիշեալ թերթը:

*Նոր կոտորած*

Մուշից տեղեկութիւն է հասել, մարտի սկիզբներն այնտեղ 13 հայ ընտա-

